Արձանագրություն N 2

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2022/5>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

21 դեկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա. Առուշանյան

Քարտուղար՝ Վ. Ղազարյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝ Ա. Շահինյան

1. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2022/5>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել է 2021թ. դեկտեմբերի 21-ին, ժամը 15:00-ին:

2. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է 2021թ. դեկտեմբերի 22-ին, ժամը 15:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2021թ. դեկտեմբերի 23-ին, ժամը 12:00-ին:

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2022/5>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

23 դեկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 12:00

6. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2022/5>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2021թ. դեկտեմբերի 22-ին, ժամը 15:00-ին:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N	Մասնակցի անվանումը	Տվյալները
1	Յուքոմ ՓԲԸ	ք. Երևան, Դավիթ Անհաղթ 8/4, հեռ. 095555054

8. Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.

ՀՀ դրամ

չափաբաժնի համարը	*Գնման առարկայի անվանումը*	*Չափման միավորը*	*Քանակը*	*Գնման առարկայի գնման հայտով հաստատված գինը*	*Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկները **	
					Յուքոմ ՓԲԸ	
					Գնի առաջարկը	
					առանց ԱԱՀ	**ներառյալ ԱԱՀ**
1	տեղեկատվության էլեկտրոնային փոխանցման ծառայությունների (շարժական VPN ծառայություն)	դրամ	1	7950000	6625000	7950000

***Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը**

9. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում **Յուքոմ ՓԲԸ** –ն:

10. Հայտի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ուղարկված հայտը Համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

11. Ներկայացված հայտի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԾՁԲ-2022/5>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել **Յուքոմ ՓԲԸ**-ին:

12. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

13. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Ա. Առուշանյան

Քարտուղար՝ _____ Վ. Ղազարյան